Աշխատել Գերմանիայում և վերադառնալ Հայաստան.

գործնական ուղեցույց Հայաստանից Գերմանիա մեկնող շրջանառու աշխատանքային միգրանտների համար

Strengthening Evidence-Based Management of Labour Migration in Armenia
«Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում»

This project is funded by
the EUROPEAN UNION
Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն
International Organization
for Migration

This publication has been produced with the assistance of the EUROPEAN UNION. The contents of this publication are the sole responsibility of the International Center for Human Development and can in no way be taken to reflect the views of the EUROPEAN UNION.

Սույն հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության օժանդակությամբ: Սույն հրատարակության բովանդակության համար պատասխանատու է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը և այն չի կարող մեկնաբանվել որպես Եվրոպական միության տեսակետ:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր երախտագիտությունն է հայտնում Եվրոպական միությանը Հայաստանում միգրացիոն քաղաքականության բարելավմանն ուղղված ջանքերին աջակցելու և մասնավորապես «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» եռամյա ծրագրին օժանդակելու համար, որը կենտրոնն իրականացնում է Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ: Կենտրոնն առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում ՀՀ Արտաքին գործերի, ՀՀ Սփյուռքի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին, ինչպես նաև ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայությանը՝ եվրոպական երկրներում բնակվող հայ աշխատանքային միգրանտների խնդիրների առանձնահատկությունների բացահայտման և դրանց արձագանքելու շուրջ արտահայտած տեսակետների ու դիտողությունների համար:

Ուղեցույցում առկա բոլոր կայքերի հղումները տրված են 30.01.2013թ. դրությամբ

Ուղեցույցում օգտագործվել են հետևյալ նյութերը՝

Շապիկին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դրոշը
Աղբյուրը՝ http://wallpaperstock.net/germany-flag_wallpapers_32952_1280x800_1.html

էջ 4 - Բունդեսթագի շենքը
Աղբյուրը՝ http://www.earthinpictures.com/world/germany/berlin/bundestag_(german_parliament)_1280x960.html

էջ 10 - Քյոլնի Մայր տաճարը
Աղբյուրը՝ http://en.wikipedia.org/wiki/File:Cologne_cathedral_at_dusk.jpg

էջ 14 - Բրանդերբուրգյան դարպասները
Աղբյուրը՝ http://www.freeimageslive.co.uk/free_stock_image/brandenburg-gate-platz-jpg

էջ 34 - Ռոտենբուրգ Տաուբերի վրա. տեսարան քաղաքից
Աղբյուրը՝ http://www.exomapia.ru/places/281595

Բովանդակություն

Գերմանիայի մասին՝ համառոտ 5

Ինչպես աշխատանք գտնել Գերմանիայում 6
Աշխատանքի դիմելու կարգը և աշխատանքի տեղավորման լիազորված գործակալությունները 8
Որակավորման ճանաչում 12

Ինչ պետք է իմանալ 16
Լեզու 16
Կացարան 16
Հարկեր և սոցիալական ապահովագրում 18
Առողջության ապահովագրություն 20

Ֆինանսական հարցեր 21
Ծախսեր՝ նախքան Գերմանիա մեկնելը 21
Ֆինանսական հաստատություններ, վճարման ձևեր 22
Վճարներ դիմումներ ներկայացնելիս 24

Աշխատանքի և կացության թույլտվության համար դիմելու կարգը 24
Մինչև 3 ամիս ժամկետով Գերմանիա մուտք գործելու և աշխատանքի թույլտվություն ստանալու դիմում 24
3 ամիսը գերազանցող ժամկետով աշխատանքի և կացության թույլտվություն ստանալու դիմում 27
«Կապույտ քարտ» (Blue Card) 28
Ուր և ինչպես դիմել 28

Ինչպես պաշտպանել շահերը 29
Մուտքի վիզայի դիմումի վերաբերյալ որոշման բողոքարկում 30
Աշխատանքային և կոլեկտիվ պայմանագիր 30
Թրաֆիքինգ 31
Նվազագույն աշխատավարձ 32
Աշխատանքային պայմաններ 33
Լիազորված ներկայացուցիչ 33
Առողջություն. ՄԻԱՎ 35

Եթե ունեք հարցեր կամ հայտնվել եք դժվար կացության մեջ 36
Թրաֆիքինգ 36
Հայաստանի Հանրապետության դեսպանությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում 37

Հայ համայնքի կազմակերպությունները և միությունները 37

Կյանքը Գերմանիայում 39
Նվազագույն կենսապահովում 39
Լեզու 39
Ազգային սովորույթներ 41
Ընտանիք և ընկերներ 41
Ճշտապահություն 41
Վարքագծի պաշտոնական կանոններ 41
Անմիջական հաղորդակցություն 42
Պլանավորում 42
Ողջույնի ձևեր 42
Տունը գերմանացիների համար 42
Կենցաղային աղբի տեսակավորում և/կամ վերամշակում 43
Ճիշտ նվերի ընտրություն 43

Տեղեկատու կայքեր 43

Հարգելի հայրենակից,

Արժանավայել աշխատանքը դարեր շարունակ եղել և մնում է յուրաքանչյուրիս համար ամենակարևոր խնդիրներից մեկը: Շատերն իրենց կարիքներին ու կարողություններին համապատասխան աշխատանք փնտրում են ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում: Այդուհանդերձ, քչերն են տեղյակ արտերկրում արժանապատիվ աշխատանք գտնելու և աշխատելու դժվարություններին ու մարտահրավերներին:

Ուղեցույցը, որ հիմա թերթում եք, կփորձի պատասխանել Գերմանիայում աշխատանք գտնելու, աշխատելու և հայրենիք վերադառնալու վերաբերյալ առավել կարևոր մի շարք հարցերի, կտա գործնական խորհուրդներ, և կուղղորդի ճիշտ որոշում կայացնելու ճանապարհին:

Ուղեցույցում ներկայացվում են Գերմանիայի մասին համառոտ տեղեկություններ, այդ երկրում աշխատանք փնտրելու ընթացակարգերը, ինչպես նաև մի շարք անհրաժեշտ նախապատրաստական քայլեր: Մանրամասն ներկայացվում են աշխատանքի և կացության թույլտվություններին առնչվող ընթացակարգերը: Ուղեցույցում թվարկվում են նաև աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության հիմնական միջոցներն ու համապատասխան կազմակերպությունները:

Հուսով ենք, որ ուղեցույցը օգտակար կլինի, կծառայի ձեր կարիքներին և կօգնի ձեզ խուսափել այն ճակատագրական սխալներից, որոնք սովորաբար կատարվում են միգրացիայի ուղին բռնած մեր շատ հայրենակիցների կողմից:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության
խորհրդարանի՝ Բունդեսթագի շենքը

Գերմանիան դաշնային խորհրդարանական հանրապետություն է՝ բաղկացած 16 երկրամասերից (գերմ.՝ “Länder”), որոնցից յուրաքանչյուրն ունի իր սահմանադրությունը, խորհրդարանը և կառավարությունը: Բարձրագույն իշխանությունը պատկանում է դաշնային մարմիններին: Գերմանիան Եվրամիության ամենախիտ բնակեցված երկիրն է, որի բնակչության թիվը կազմում է 82 միլիոն: Գերմանիան սահմանակցում է ինը պետության՝ Դանիային, Լեհաստանին, Չեխիային, Ավստրիային, Շվեյցարիային, Ֆրանսիային, Լյուքսեմբուրգին, Բելգիային և Հոլանդիային: Գերմանիայի տարածքը կազմում է մոտ 357.000 քառակուսի կիլոմետր: Երկիրը տարածվում է Հյուսիսային և Բալթիկ ծովերից (հյուսիսում) դեպի Ալպյան լեռնաշղթա (հարավում): Գերմանիայի տարածքով են հոսում Եվրոպայի ամենախոշոր գետերը՝ Հռենոսը, Դանուբը և Էլբան: Գերմանիայի լանդշաֆտը մի բազմազան և հիասքանչ պատկեր է՝ բարձր և ցածր լեռներով, լճերով, անտառներով և մոտ 2.390 կմ երկարությամբ ափագծով:

1950 թվականից ի վեր Գերմանիան ընդունել է օտարերկրյա աշխատողների: 2011 թվականի դրությամբ երկրում գրանցված օտարերկրացիների թիվը հասել է **7 միլիոնի**: Դրան զուգահեռ Գերմանիայի շուրջ 16 միլիոն քաղաքացիներ կամ սերում են միգրանտներից, կամ էլ ծնվել են արտերկրում:[1]

Գերմանիայում սահմանվել է ներգաղթի հստակ քաղաքականություն, որի միջոցով պետությունը սատարում է բարձր որակավորում ունեցող մասնագետների կարճաժամկետ և երկարաժամկետ միգրացիան:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործում է սոցիալական շուկայական տնտեսության մոդելը: Այսինքն, պետությունը երաշխավորում է ձեռներեցների արդար մրցակցությունը և ազատ գործունեությունը՝ միաժամանակ ձգտելով սոցիալական հավասարակշռություն պահպանել տնտեսական աճի բարձր ցուցանիշի, ցածր գնաճի, գործազրկության ցածր ցուցանիշի, բարենպաստ

1 http://goo.gl/kXFZ8

աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության և հանրային ծառայությունների միջև: Այստեղ հետևողականորեն կիրառվում է իրավական որոշակիության սկզբունքը. մարդիկ օրինապահ են և ապավինում են օրենքին:[1]

Մյուս եվրոպական երկրներում տարածված է այն կարծիքը, որ գերմանացիները կազմակերպված, ճշտապահ, հուսալի, փոքր-ինչ չափից ավելի բծախնդիր, սակայն անմիջական և ընկերասեր ազգ են:

Գերմանիայի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ կայքերը՝

http://www.bund.de/EN

http://www.destatis.de

Ինչպես աշխատանք գտնել Գերմանիայում

Ժամանակավոր աշխատանք գտնելու կարևորագույն նախապայման է ապագա գործատուին պատշաճ ներկայանալը: Գերմանիայում ցանկացած տեսակի աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրական: Լավ ինքնակենսագրական կազմելու համար խորհուրդ ենք տալիս ուսումնասիրել աշխատանքի որոնման ինտերնետային կայքերը, այդ թվում՝ Հայաստանի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պաշտոնական կայքը: Կարող եք նաև խորհրդակցել աշխատանքի տեղավորման պետական կամ մասնավոր ծառայությունների մասնագետների հետ:

Հայաստանի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պաշտոնական կայքը՝

www.employment.am

Ինքնակենսագրականը պետք է պարունակի տեղեկություններ Ձեր կրթության, աշխատանքային փորձի, հիմնական ձեռքբերումների, հատուկ հմտությունների (օրինակ՝ վարորդական փորձ, լեզուների իմացություն) և գործատուի համար հետաքրքրություն

1 http://goo.gl/WwcBz

ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ: Ձեզանից կարող են պահանջել կրթությունը հավաստող փաստաթղթեր: Եթե ունեք միայն միջնակարգ կրթություն, ապա ինքնակենսագրականին ցանկալի է կցել միջնակարգ կրթության վկայականի վավերացված պատճենը և դրա թարգմանությունը՝ կատարված հավատարմագրված նոտարական թարգմանչի կողմից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խորհուրդ ենք տալիս այցելել հետևյալ կայքը՝
http://goo.gl/EsPvd

Միջին կամ բարձր որակավորում պահանջող աշխատանքի դիմելու կարգը ներկայացված է «Որակավորման ճանաչում» գլխում:

Հիշեք, որ Գերմանիայում ժամանակավոր աշխատելու մտադրությունը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է լավ գործատու գտնել, քանի որ հենց գործատուն է իրավասու մարմիններին ներկայացնում աշխատանքի թույլտվության դիմում՝ օտարերկրացուն աշխատանքի ընդունելու համար:

Գերմանիայում աշխատուժի մեծ պահանջարկ է նկատվում հետևյալ մասնագիտություններում՝ բժիշկներ և բուժքույրեր (առողջապահություն), տեղեկատվական տեխնոլոգիաների ինժեներներ (արդյունաբերություն և գիտություն), տարբեր ոլորտների որակավորված ինժեներներ:[1]

ԵՄ Աշխատանքային շարժունակության պորտալի Գերմանիայի էջի տվյալներով **2012 թվականի տարեսկզբում առավել մեծ թիվ են կազմել հետևյալ մասնագիտությունների գծով թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները՝ բժիշկներ, ռադիո և ձայնային սարքավորումների մեխանիկներ, օդային փոխադրամիջոցների ոլորտի մասնագետներ, ծեփագործներ և հատակագործներ, բուժքույրեր և մանկաբարձներ, ապահովագրության ոլորտի մասնագետներ, դեղագործներ, երկաթուղային գծերի շարողներ, տրամվայի վարորդներ և մեքենավարներ: Աշխատուժի մեծ պահանջարկ կա նաև հետևյալ մասնագիտությունների գծով՝ մետաղագործներ, ինժեներ-մեխանիկներ, շինարարներ և շենքի նյութատեխնիկական սպասարկման մասնագետներ (ջրմուղագործներ, սանտեխնիկայի և օդափոխության համակարգերի մոնտաժողներ և խողովակադիր բան-**

1 http://goo.gl/gjgZ7

վորներ), ինչպես նաև՝ խնամքի ոլորտում (հիվանդապահներ և տարեցների խնամողներ).[1]

Գերմանիայում աշխատուժի պահանջարկի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք գտնել նաև **Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության** կայքում: Իսկ աշխատուժի պահանջարկն ըստ երկրամասերի ներկայացված է ԵՄ Աշխատանքային շարժունակության պորտալի (անգլ.՝ "EU Job Mobility Portal") Գերմանիայի էջում:

Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության կայքը՝
http://goo.gl/wKI5S
ԵՄ Աշխատանքային շարժունակության պորտալի (անգլ.՝ «EU Job Mobility Portal») Գերմանիայի էջը՝
http://goo.gl/BLBoR

Աշխատանքի դիմելու կարգը և աշխատանքի տեղավորման լիազորված գործակալությունները

Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալությունը և դրա մի շարք ստորաբաժանումները լրացնում են Գերմանիայի աշխատաշուկայի հիմնական հատվածի պահանջարկը: Գործակալության ենթակայության տակ գտնվող մասնագիտացված հաստատությունը՝ Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայությունը (գերմ.՝ ZAV), կոչված է խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու աշխատանքի հարցերով և հաստատելու աշխատանքի թույլտվության վերաբերյալ դիմումները, որոնք ներկայացնում են օտարերկրյա քաղաքացիները կամ նրանց աշխատանքի ընդունելու մտադրություն հայտնող գործատուները:[2]

Օտարերկրացիները կարող են Գերմանիայում աշխատանք փնտրել և թափուր աշխատատեղի համար դիմել ինտերնետով, որը, թերևս, առավել հարմար միջոց է: Այսպես, գրանցվելով **Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության պորտալում** Դուք կկարողանաք առցանց դիմել թափուր աշխատատեղերի համար, պարբերաբար ստանալ Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայության թարմացված տեղեկությունները համապատասխան թափուր աշխատատեղերի և աշխատանքի որոնման Ձեր ընթացքի մասին: Թեև կայքը հասանելի է վեց լեզուներով՝ գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն և թուրքերեն,

1 ԵՄ Աշխատանքային շարժունակության պորտալի Գերմանիայի էջ՝ http://goo.gl/HfO1z
2 **Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալություն՝** http://goo.gl/B6FYK

այնուամենայնիվ, անհրաժեշտ տեղեկությունները պետք է մուտքագրել միայն գերմաներենով: Համապատասխան ցուցումները մանրամասն ներկայացված են “Find a job in Germany quickly and easily” («Գերմանիայում արագ և հեշտ աշխատանք գտնելու մասին») գրքույկում:

Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության պորտալում՝

http://jobboerse.arbeitsagentur.de

«Գերմանիայում արագ և հեշտ աշխատանք գտնելու մասին») գրքույկում, հղումը՝

http://goo.gl/JWPNA

Գերմանիայում աշխատանք գտնելու վերաբերյալ ավելի ընդհանուր խորհրդատվություն և ուղղորդում կարելի է գտնել Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության մի քանի տեղեկատվական աղբյուրներում:

Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայության կայքի անգլալեզու գլխավոր էջը՝

www.zav-auslandsvermittlung.de/deutschland

Միջին և բարձր որակավորում ունեցող, Գերմանիայում աշխատել ցանկացող օտարերկրացիների համար նախատեսված կայքը՝

www.make-it-in-germany.com

Գերմանիայում արտադրական պրակտիկա անցնելու կամ մշտական աշխատանք գտնելու ցանկություն ունեցող երիտասարդ օտարերկրացիների համար նախատեսված կայքը (տեղեկատվությունը գլխավորապես հասանելի է գերմաներենով և անգլերենով)՝

http://www.young-germany.de

Կարելի է նաև համապատասխան հարցում ներկայացնել էլեկտրոնային նամակով հետևյալ էլեկտրոնային հասցեներին՝ workingermany@arbeitsagentur.de; zav-auslandsvermittlung@arbeitsagentur.de, կամ խորհրդատվություն ստանալ՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով՝ +49 228 713-1313:

Գերմանիայում մեծ թիվ են կազմում նաև աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունները: Եթե ցանկանում եք դիմել մասնավոր գործակալության կողմից տեղադրված թափուր աշխատատեղի համար, նախ համոզվեք, որ տվյալ գործակալությունն օրինական հիմքերով է աշխատում և գրանցված է Ձեռնարկությունների դաշնային ռեգիստրի կայքում՝ http://goo.gl/632wW: Խորհուրդ է տրվում նաև համոզվել, որ տվյալ գործակալությունն անդամակցում է Զբաղվածության մասնավոր գործա-

Քյոլնի Մայր տաճարը

կալությունների դաշնային միավորմանը (գերմ.՝ “Bundesverband Personalvermittlung”): Այդ հարցը պարզելու համար փորձեք գտնել գործակալության անվանումը հետևյալ կայքում՝ **http://www.bpv-info.de/vermittlersuche**:

Հաշվի առեք, որ աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների ծառայությունները վճարովի են, իսկ օտարերկրացիների պարագայում ներառում են նաև խորհրդատվություն թափուր աշխատատեղերի համար դիմելու, և ինքնակենսագրական կազմելու հարցերում: Նախքան գործակալությունների ծառայություններից օգտվելը հարկավոր է պայմանագիր կնքել գործակալության հետ և ստուգել տրամադրվող տեղեկությունների իսկությունը: Գործակալությունների ծառայությունների դիմաց վճարեք միայն աշխատանքի տեղավորման գործընթացի բարեհաջող ավարտից հետո. **երբեք մի՛ վճարեք նախօրոք**:[1]

Հիշեք, որ Գերմանիայում գործում են նաև զբաղվածության գործակալությունների հատուկ տեսակ հանդիսացող ժամանակավոր զբաղվածության կամ աշխատանքի տեղավորման գործակալություններ (գերմ.՝ “Zeitarbait Agentur”), որոնց արգելվում է աշխատանք առաջարկել Գերմանիայում չբնակվող օտարերկրացիներին: Դա նշանակում է, որ նման գործակալությունները չեն կարող հանդես գալ որպես օտարերկրացիների գործատու, և նրանց անունից աշխատանքի թույլտվության դիմում ներկայացնել Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայություն:[2] Նույնը վերաբերում է նաև հայաստանյան զբաղվածության գործակալություններին, որոնք թեև կարող են միայն աջակցել Գերմանիայում թափուր աշխատատեղի համար դիմելու և համապատասխան աշխատանք գտնելու հարցերում, սակայն իրավունք չունեն հանդես գալ որպես ժամանակավոր գործատու, և Գերմանիա ուղարկել Հայաստանի քաղաքացի հանդիսացող աշխատողին:

Այսպիսով, օտարերկրացիները կարող են օգտվել ժամանակավոր զբաղվածության գործակալությունների ծառայություններից միայն այն դեպքում, եթե նրանք արդեն որոշակի ժամանակ ապրել են Գերմանիայում և ունեն վավերական կացության թույլտվություն:

Ստորև ներկայացվում է թափուր աշխատատեղերի հայտարարությունների կամ զբաղվածության մասնավոր գործակալությունները

1 **http://goo.gl/6fOz0**

2 “Questions and Answers on the Employment of Foreign Workers in Germany” («Հարցեր և պատասխաններ Գերմանիայում օտարերկրացիների աշխատանքի տեղավորման մասին»), Գերմանիայի Դաշնային Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ **http://goo.gl/Xff8J**

ների ինտերնետային կայքերը, որոնց մեծ մասը միայն գերմանե-
րենով է.

www.xing.com
www.arbeitsamt.de
www.bewerbung.de
www.stellenmarkt.de
www.jobpilot.de
www.jobscout24.de
www.jobline.de
www.stepstone.de
www.karrieredirekt.de
www.jobware.de
www.betreut.de (Երեխաների դայակի, ինչպես նաև տերերի բացակայության ժամանակ ընտանի կենդանիների խնամքի ծառայություն):

Հետևյալ ազգային թերթերը նույնպես ունեն թափուր աշխատատեղերի հայտարարությունների առցանց պորտալներ.

- Frankfurter Allgemeine Zeitung (FAZ)՝ www.fazjob.net
- Süddeutsche Zeitung՝ www.laufbahner.de
- The Local՝ http://www.thelocal.de/jobs (առցանց անգլալեզու թերթ):

Նկատի ունեցեք, որ նշված կայքերում տեղադրված թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները հասցեագրված են առաջին հերթին Եվրամիության երկրների քաղաքացիներին: Թափուր աշխատատեղի մասին տեղեկությունը ԵՄ-ի ողջ տարածքում հայտարարելուց առնվազն 10 օր հետո միայն գործատուն կարող է քննարկել Եվրամիության անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիների դիմումները: Ուստի, Հայաստանից ստացված աշխատանքի ընդունվելու դիմումի դիտարկումը կարող է ակնկալվածից ավելի երկար տևել:

Որակավորման ճանաչում

Գերմանիայում դաշնային մակարդակով սահմանված են լիցենզավորման ենթակա 81 մասնագիտություն և զբաղմունք (այդ թվում՝ արհեստի ոլորտում “Meister” որակավորմամբ լիցենզավորման են-

թակա 41 տեսակի զբաղմունք), իսկ երկրամասերի մակարդակով՝ 18 մասնագիտություն:[1] Դա նշանակում է, որ այդ մասնագիտություններով աշխատելու համար պետք է անցնել համապատասխան դասընթացներ (մասնագիտական կամ բարձրագույն) և ստանալ որակավորման լիցենզիա: Նման ընթացակարգով անցնում են հետևյալ մասնագետները՝ բժիշկ, բուժքույր, իրավաբան, ուսուցիչ, մանկապարտեզի դաստիարակ, ճարտարագետ, ինչպես նաև որոշ արհեստավորներ՝ վարսավիր, հացթուխ, մսագործ և այլն: Գերմանիայում նշված մասնագիտություններով աշխատելու ցանկություն ունեցող անձիք պետք է նախ միջնակարգ կամ բարձրագույն կրթության մասին վկայականի ճանաչման դիմում ներկայացնեն և դրական պատասխանի դեպքում միայն դիմեն տվյալ աշխատատեղի համար: Ճշտելու համար, արդյոք Գերմանիայում տվյալ մասնագիտությունը լիզենզավորման ենթակա է, թե ոչ, այցելեք Եվրոպական հանձնաժողովի՝ լիզենզավորման ենթակա մասնագիտությունների ընդհանուր տվյալների բազայի կայքը և ընտրեք “Germany” (Գերմանիա) խորագիրը:

Եվրոպական հանձնաժողովի՝ լիզենզավորման ենթակա մասնագիտությունների ընդհանուր տվյալների բազայի կայքը՝
http://goo.gl/OdbUP

Գերմանիայի Կրթության և գիտական հետազոտությունների նախարարությունը նույնպես գործարկել է մի տեղեկատվական պորտալ, որտեղ մանրամասն ներկայացված են բոլոր այն քայլերը, որոնք անհրաժեշտ են պարզելու համար, թե որ մասնագիտության դեպքում է պահանջվում հատուկ որակավորում, թե որ պետական հաստատությունն է պատասխանատու տվյալ ոլորտում որակավորման ճանաչման համար, թե ինչպես դիմել նման հաստատություն և թե ինչ փաստաթղթեր ներկայացնել: Պորտալում կարող եք գտնել նաև խորհրդատվական ծառայությունների հեռախոսահամարներ և այլ անհրաժեշտ տեղեկություններ (“Recognition in Germany” («Գերմանիայում որակավորման ճանաչման ընթացակարգը») պորտալ):

«Recognition in Germany» / «Գերմանիայում որակավորման ճանաչման ընթացակարգը» պորտալ՝
http://goo.gl/xdQQc

1 Կրթության և գիտական հետազոտությունների դաշնային նախարարության “Recognition in Germany” («Գերմանիայում որակավորման ճանաչման ընթացակարգը»)

Բրանդերբուրգյան դարպասները Բեռլինում

Կարող եք նաև բազմալեզու (այդ թվում՝ ռուսերեն) նյութեր ներբեռնել հետևյալ ինտերնետային կայքից՝ http://goo.gl/oo565:

Որակավորման ճանաչման դիմումի ներկայացման հետ կապված վճարները տարբեր են՝ կախված նրանից, թե որ հաստատությանն է հասցեագրվում դիմումը: Առանձին դիմումի դիտարկումը կարող է տևել մինչև երեք ամիս:[1] Ամեն դեպքում, որակավորման ճանաչման հետ կապված հարցերի մասին նախ խորհրդակցեք Ձեր ապագա գործատուի հետ:

Եթե Գերմանիայում տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար պաշտոնապես հատուկ արտոնագիր չի պահանջվում, ապա գործատուն է որոշում կայացնում օտարերկրացիների առկա որակավորման ճանաչման վերաբերյալ: Նա կարող է պահանջել ներկայացնել փաստաթուղթ այն մասին, որ աշխատողի ունեցած որակավորումը համապատասխանում է Գերմանիայում տվյալ ոլորտի որակավորմանը: Գործատուն կարող է պահանջել նաև փորձագիտական եզրակացություն Գերմանիայի սահմաններից դուրս աշխատողի ստացած կրթության մակարդակի մասին:

Որակավորման գնահատման և ընդհանուր եզրակացության համար հարկավոր է դիմել Օտարերկրացիների կրթության հարցերով կենտրոնական վարչություն (գերմ.՝ ZAB), կայքը՝ http://www.kmk.org/zab (հասանելի է միայն գերմաներենով):

Օտարերկրացիների կրթության հարցերով կենտրոնական վարչության (գերմ.՝ ZAB) կայքը՝
http://www.kmk.org/zab (հասանելի է միայն գերմաներենով)

Որակավորման ճանաչման ընթացքում ներկայացվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պետք է նախապես թարգմանված լինեն հավատարմագրված նոտարական թարգմանչի կողմից:

1 Կրթության և գիտական հետազոտությունների նախարարության “Recognition in Germany” («Գերմանիայում որակավորման ճանաչման ընթացակարգը») տեղեկատվական պորտալ՝ http://goo.gl/0j6Eo

Լեզու

Գերմանիայի պետական լեզուն գերմաներենն է, և շատ աշխատատեղերի դիմելու համար կարող է պահանջվել այդ լեզվի իմացությունը: Թեև մուտքի վիզայի կամ կարճաժամկետ կացության թույլտվության տրամադրման ժամանակ գերմաներենի իմացությունը չի ստուգվում, այնուամենայնիվ, լիցենզավորման ենթակա որոշ մասնագիտություններով (նման մասնագիտությունների մասին լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են նախորդ հատվածում) աշխատելու համար լեզվի իմացությունը պարտադիր է: Բոլոր մնացած դեպքերում այդ հարցը որոշում է գործատուն:

Թեև առօրյա կյանքում կարող է օգտակար լինել որևէ օտար լեզվի, օրինակ՝ անգլերենի իմացությունը, այնուամենայնիվ, ցանկալի է, որ աշխատանքի մեկնելուց առաջ սկսեք սովորել գերմաներեն և ճշտեք Ձեր ապագա գործատուից, թե արդյոք Ձեզ աշխատանքի ընդունելուց հետո նա կտրամադրի լեզու սովորելու հետ կապված աջակցություն (լեզվի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Կյանքը Գերմանիայում» բաժինը):[1]

Կացարան

Նախքան Գերմանիա մեկնելն անհրաժեշտ է պատշաճ կացարան գտնել: Աշխատանքի առաջարկ ստանալուց հետո ճշտեք՝ արդյոք Ձեր ապագա գործատուն կարող է օգնել Ձեզ կացարան գտնելու հարցում: Գործատուից ճշտեք նաև աշխատանքի թույլտվության և/կամ մուտքի վիզայի դիմումներում նշվելիք հասցեն:

Միշտ նախապես պլանավորեք ձեր գործողությունները. վարձով սենյակ կամ բնակարան փնտրեք և համապատասխան հայտարարություններ տեղադրեք տարբեր վարձակալման հայտարարությունների ինտերնետային կայքերում և տեղական թերթերում: Խորհուրդ ենք տալիս այցելել բնակարանների վարձակալման հայտարարությունների համար նախատեսված հետևյալ օգտակար ինտերնետային կայքերը.

- **www.immoscout24.de**

1 http://goo.gl/vEdyW

- www.immowelt.de
- www.quoka.de
- www.immonet.de
- www.zwischenmiete.de
- www.wg-gesucht.de
- www.mitwohnzentrale.de (կահավորված բնակարանների ժամանակավոր վարձակալում)
- http://www.e-rent.de/en
- http://housing.justlanded.com/en/Germany

Գերմանիայի քաղաքներից և համայնքներից շատերն ունեն իրենց առանձին ինտերնետային կայքերը (օրինակ՝ www.berlin.de; www.muenich.de), որտեղ նորաբնակները կարող են գտնել օգտակար տեղեկություններ, այդ թվում նաև՝ բնակարանների վարձակալման հայտարարություններ: Բեռլինի կամ Մյունխենի նման մեծ քաղաքների կայքերում տեղեկությունները ներկայացված են տարբեր լեզուներով, այդ թվում՝ ռուսերենով:

Բնակարանների վարձավճարները տարբերվում են և, որպես կանոն, բարձր են մեծ քաղաքներում, օրինակ՝ Համբուրգում, Մյունխենում կամ Քյոլնում: Մեծ քաղաքում բնակարանի վարձավճարն՝ օժանդակ ծախսերով (ջեռուցման, ջրի և գազի վճարներ) կազմում է մոտ 14 եվրո (7600 դրամ) մեկ քառակուսի մետրի համար: Փոքր քաղաքներում և գյուղական բնակավայրերում միջին վճարը կազմում է մոտ 8 եվրո (4300 դրամ) մեկ քառակուսի մետրի համար:[1]

Բնակարանի վարձավճարը, որպես կանոն, չի ներառում կոմունալ վճարները: Հաշվի առեք, որ տանտերը կարող է պահանջել կանխավճար, որն ամբողջությամբ կվերադարձվի, եթե բնակարանը հանձնեք նույն վիճակում, ինչ վարձակալել եք, այսինքն՝ առանց վնասի:

Կարելի է օգտվել անշարժ գույքի գործակալությունների ծառայություններից: Նման ծառայությունների միջնորդավճարը կարող է կազմել վարձակալված բնակարանի վարձավճարի եռապատիկը,

1 http://goo.gl/rbWZB

սակայն ոչ ավելի: Պայմանագիր կնքեք անշարժ գույքի գործակալների հետ, և կանխավճար մի տվեք նրանց: Խորհուրդ է տրվում դիմել այն գործակալներին, ովքեր անդամակցում են Գերմանիայի անշարժ գույքի միավորմանը:

Գերմանիայի անշարժ գույքի միավորման (գերմ.՝ «Immobilienverband Deutschland IVD»), կայքը՝
www.ivd.net

Վարձակալության պայմանագրերի, շուկայական գների համեմատության, վարձակալների միավորումների և այլ հարցերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ http://goo.gl/QxXvg:

Իսկ բնակարանների վարձակալության հայտարարություններում տեղ գտած հապավումների մասին օգտակար տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ հղումի ներքո՝ http://goo.gl/ediK2:

Չմոռանաք Ձեր հասցեն ներկայացնել Ձեր համայնքի Բնակչության հաշվառման վարչություն, և ստանալ հարկ վճարողի հաշվառման քարտ (գերմ.՝ "Lohnsteuerkarte"):

Հարկեր և սոցիալական ապահովագրում

Որպես կանոն, աշխատողի ընդհանուր եկամտից հարկերը հանում է գործատուն: Գերմանիայի հարկային համակարգը բավականին բարդ է, ինչը դժվարացնում է հստակ հաշվարկել ընդհանուր եկամտից հանվելիք հարկը, որը կախված է դրա չափերից և տարբեր պայմաններից: Այսպիսով, եկամտահարկը հաշվարկվում է 15-42 տոկոս դրույքաչափով՝ կախված ընդհանուր եկամտից և այն կատեգորիայից, որով հարկվում է տվյալ աշխատողը:[1]

Եկամտահարկից բացի գործատուն Ձեր աշխատավարձից պահելու է նաև սոցիալական վճարներ պարտադիր սոցիալական և բժշկական ապահովագրության համար: Այդ պահումները կազմում են ընդհանուր եկամտի մինչև 21 տոկոսը:[2] Նշված վճարները կազմում են աշխատողի ապահովագրության փաթեթը, որը ներառում է կենսաթոշակ, ապահովագրություն արտադրական դժբախտ պատահարներից, մասնագիտական հիվանդություններից, հաշմանդամությունից և այլն:

1 http://goo.gl/dZcqS
2 ԵՄ Աշխատանքային շարժունակության պորտալի Գերմանիայի էջ, http://goo.gl/DlSn2

Սոցիալական վճարների ավելի մանրամասն դասակարգմանը կարող եք ծանոթանալ հետևյալ կայքում՝
http://goo.gl/InDuk

Ֆինանսական տարվա ավարտին հարկ վճարողները պետք է ներկայացնեն հարկային հայտարարագիր, և կարող են ներկայացնել նաև հարկի փոխհատուցման դիմում: Հարկային մարմինները վերադարձման ենթակա գումարը հաշվարկում են որոշակի ծախսերի հիման վրա: Անվճար հարկային խորհրդատվության հետ կապված լրացուցիչ տեղեկությունների և առաջարկների համար հետևեք այս հղումին՝ http://goo.gl/BjnZy: Հարկային հայտարարագրի հետ կապված հարցերով կարող եք դիմել նաև Ձեր գործատուին:

Հայաստանը և Գերմանիան կնքել են կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ երկկողմ համաձայնագիր: Եթե Ձեր եկամուտը վաստակում եք Գերմանիայում ոչ ավել քան վեց ամսվա ընթացքում և այդ երկրում մշտապես չեք բնակվում, ապա կարող եք եկամտահարկը վճարել ոչ թե Գերմանիայում, այլ Հայաստանում՝ տեղի հարկային դրույքաչափով: Եկամտահարկը Հայաստանում վճարելու համար անհրաժեշտ է հարկ վճարողի հաշվառման վկայական ստանալ Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեից և այն ներկայացնել Գերմանիայում Ձեր գործատուին և/կամ լիազոր հարկային մարմնին: Հայաստան վերադառնալուն պես պետք է հայտարարագրեք Գերմանիայում բնակվելու ընթացքում կուտակած Ձեր եկամտահարկը: Եթե Ձեր աշխատանքային պայմանագրի տևողությունը գերազանցում է վեց ամիսը, ապա եկամտահարկը պետք է վճարեք միայն Գերմանիայում: Հարկ վճարողի հաշվառման վկայական ստանալու և դրա հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն կամ որևիցե տեղական մասնաճյուղ:

Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության կայքը՝
www.taxservice.am

Հաշվի առեք, որ Հայաստանում եկամտահարկ վճարելու հնարավորությունը չի տարածվում սոցիալական վճարների վրա: Այդ իսկ պատճառով, եթե ցանկանում եք ընդգրկվել Հայաստանի կենսաթոշակային համակարգում և օգտվել կենսաթոշակային իրա-

վունքներից, ապա դիմեք Հայաստանի սոցիալական ապահովության պետական ծառայություն՝ Ձեր կենսաթոշակի համար անհրաժեշտ սոցիալական վճարների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: Նշենք, որ 2013 թվականից սկսած Հայաստանում գործելու է Կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգը:

Հայաստան վերադառնալու պահից 24 ամիս անց կարող եք կենսաթոշակային վճարների փոխհատուցման դիմում ներկայացնել Պետական կենսաթոշակային հիմնադրամ:[1] Այս գործընթացի մանրամասները ճշտելու համար դիմեք Հայաստանում Գերմանիայի դեսպանություն:

Առողջության ապահովագրություն

Գերմանիայում գործում է առողջության պարտադիր ապահովագրության համակարգ, ուստի բժշկական ապահովագրության առկայությունը պարտադիր պայման է Գերմանիայի մուտքի վիզայի կամ կացության թույլտվության տրամադրման համար: Եթե Ձեզ առաջարկում են ստորագրել **Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության** (գերմ.՝ “Arbeitsagentur”) կողմից վավերացված աշխատանքային պայմանագիր, ապա ենթադրվում է, որ Դուք ինքնաբերաբար կընդգրկվեք առողջության ապահովագրության պետական ծրագրում, ուր հետագայում կուղղվեն գործատուի կողմից Ձեր աշխատավարձից պահված վճարները: Դուք պետք է ընտրեք առողջության ապահովագրման ծառայություններ մատուցող կազմակերպությունը (նման կազմակերպությունները մեծ թիվ են կազմում), գրանցվեք, իմանաք Ձեր սոցիալական ապահովագրության քարտի համարը և Գերմանիա հասնելուն պես այն հայտնեք Ձեր գործատուին: Եթե դժվարանում եք ընտրել նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունը, ապա կարող եք խորհրդակցել ապագա գործատուի հետ: Առողջապահության ապահովագրության միջոցով անվճար կօգտվեք բժշկական ծառայություններից, որոնք շատ թանկ են Գերմանիայում: Դուք միայն պետք է վճարեք տասը եվրո՝ երեք ամսվա ընթացքում բժշկի մոտ առաջին այցի համար, և չնչին գումար՝ նշանակված բուժման համար:

1 http://goo.gl/7kdaF

Առողջության հետ կապված հարցերը մանրամասն ներկայացված են հետևյալ հղումի ներքո՝
http://goo.gl/8qvG3

Աշխատողները կարող են ընտրել առողջության ապահովագրման մասնավոր ծառայությունները միայն այն դեպքում, եթե նրանց ամսական եկամուտը գերազանցում է 4.125 եվրոն:[1] Հնարավոր է նաև, որ Երևանում Գերմանիայի դեսպանության որոշմամբ ստիպված լինեք ձեռք բերել նաև ուղևորության համար նախատեսված առողջության կարճաժամկետ ապահովագրություն, որը Ձեզ անհրաժեշտ կլինի Գերմանիայում մնալու սկզբնական ժամանակահատվածում, մինչև որ ավարտին կհասցվեն համապատասխան պաշտոնական գործընթացները:[2]

Գերմանիայի ապահովագրության համակարգի և ոչ պարտադիր ապահովագրության ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ **http://goo.gl/11Vu8**:

Ֆինանսական հարցեր

Ծախսեր՝ նախքան Գերմանիա մեկնելը

Որպես կանոն, գործատուները չեն փոխհատուցում աշխատողների ճանապարհածախսը, ինչպես նաև՝ տոմսի, կացության թույլտվության, առողջության կարճաժամկետ ապահովագրության և բնակարանի վարձակալության կանխավճարի հետ կապված ծախսերը: Գործատուի հիմնական պարտավորությունն է աշխատողին տրամադրել օրինական աշխատանքային պայմանագիր:

Վերոհիշյալ ծախսերը հոգալու համար կարելի է նախապես գումար խնայել, պարտք վերցնել բարեկամներից կամ ընկերներից: Իհարկե, կարող եք նաև վարկ վերցնել: Այդուհանդերձ, խորհուրդ չենք տալիս դիմել նման քայլի. յուրաքանչյուր վարկ վտանգ է պարունակում, քանի որ այն մարելու ընթացքում կարող եք անկանխատեսելի կամ անհաղթահարելի դժվարությունների հանդիպել:

1 Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալություն՝ **http://goo.gl/lpXcm**
2 **http://goo.gl/gdUys**

Նկատի ունեցեք, որ կարող եք կորցնել վարկը վերցնելիս որպես գրավ տրամադրած Ձեր գույքը, ինչը կարող է կործանարար հետևանքներ ունենալ Ձեր և Ձեր ընտանիքի անդամների համար:

Արտասահման մեկնելու համար պարտքով գումար վերցնելը կարող է նաև թրաֆիքինգի հանգեցնել (ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել «Թրաֆիքինգ» բաժնում): Եթե մտադիր եք աշխատանքի մեկնել ԵՄ, և Ձեզ առաջարկում են փոխառություն վերցնել Ձեր ծախսերը հոգալու նպատակով, ապա խորհուրդ ենք տալիս մերժել նման առաջարկները:

Ֆինանսական հաստատություններ, վճարման ձևեր

Նախքան արտասահման մեկնելը հարկավոր է ողջամիտ ֆինանսական պլանավորում կատարել: Առավել ապահով է ֆինանսական գործարքներն իրականացնել ֆինանսական հաստատությունների միջոցով: Ուստի, նախքան Ձեր ֆինանսական միջոցների մասին որոշումներ կայացնելը միշտ խորհրդակցեք ֆինանսական հաստատությունների հետ: Հիշեք, որ Գերմանիայում առավել տարածված են անկանխիկ գործարքները: Ի տարբերություն ինտերնետով և վարկային կամ դեբետային քարտով իրականացված գործարքների՝ կանխիկ գործարքները շատ դեպքերում կարող են լրացուցիչ ծախսեր ենթադրել: Ընդ որում, կարող եք օգտվել ինչպես Հայաստանում, այնպես էլ Գերմանիայում մատուցվող ֆինանսական ծառայություններից:

Ֆինանսական անվտանգության, Հայաստանում բնակվող ընտանիքի անդամներին և ազգականներին գումար փոխանցելու հարմարավետության, ինչպես նաև Հայաստանում և արտասահմանում պատշաճ վարկային պատմություն (ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկություններ) ունենալու համար խորհուրդ է տրվում հայաստանյան բանկերից որևէ մեկում բանկային հաշիվ բացել Ձեզ և Ձեր այն ազգականների համար, ում գումար եք փոխանցելու: Ստուգեք Ձեր բանկային հաշվեհամարի տվյալները, և հաշվեհամարից օգտվելու կարգը: Ուշադրություն դարձրեք հատկապես հետևյալ խնդիրներին.

- Ճիշտ ընտրեք Ձեր բանկային հաշվի արժույթը, որպեսզի արտերկրից կատարած Ձեր գործարքներն ընդունվեն Հայաստանում,

- բացեք այնպիսի հաշիվներ, որոնց կցված են դեբետային կամ կրեդիտային վճարային քարտեր: Դա հնարավորություն կտա Ձեզ օգտագործել Ձեր բանկային հաշվի գումարն արտասահմանում առանց այն կանխիկացնելու,

- ընտրեք այնպիսի բանկեր, որոնք հնարավորություն են տալիս օգտվելու իրենց ծառայություններից և կառավարելու Ձեր հաշիվները ինտերնետի միջոցով: Հայաստանյան բանկերից շատերն առաջարկում են նման ծառայություն:

Շրջանառու միգրանտ աշխատողները կարող են Հայաստանում բնակվող իրենց ընտանիքին գումար փոխանցել.

- Կատարելով փոխանցումներ մի բանկային հաշվից մեկ այլ հաշվի,

- Օգտվելով արագ դրամական փոխանցումների մի շարք համակարգերից, օրինակ՝ **MoneyGram**, **Contact**, **Riatransfer**, **Unistream**, **Xpress**, որոնք գործում են և՛ Հայաստանի մարզերում, և՛ Գերմանիայի երկրամասերում:[1]

Դրամական փոխանցումների կատարման կետերի հասցեները ճշտելու համար այցելեք համապատասխան ծառայության ինտերնետային կայքը:

Հնարավոր է նաև, որ ստիպված լինեք բանկային հաշիվ բացել Գերմանիայում աշխատավարձ ստանալու, և տարբեր վճարումներ կատարելու համար: Գերմանիայի բանկերում հաշիվ բացելու համար անհրաժեշտ է ներկայացնել միայն անձնագիրը, կացության թույլտվությունը, և որոշ դեպքերում նաև գործատուի դիմումը:[2]

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) մշակել է ինտերնետային կայք հատուկ միգրանտ աշխատողների համար, որի միջոցով կարելի է համեմատել տարբեր բանկերի և դրամական փոխանցումների ծառայությունների վճարները և ընտրել լավագույն տարբերակը: Կայքը հասանելի է գերմաներենով՝ **http://goo.gl/196Gd**:

---

1 Գերմանիայում մեծ տարածում ունի "Western Union" դրամական փոխանցումների համակարգը, որը մասնավորապես գործում է նաև փոստային բաժանմունքներում: Սակայն Հայաստանում այդ ծառայության գործունեությունը կասեցվել է:

2 **http://goo.gl/Roxt8**

Դրամական միջոցների կառավարման վերաբերյալ լրացուցիչ օգտակար նյութեր կարող եք գտնել հետևյալ հղումի ներքո՝ http://goo.gl/Roxt8:

Վճարներ դիմումներ ներկայացնելիս

Գերմանիայում շահույթ հետապնդող գործունեություն ծավալելու նպատակով մուտքի վիզա («D» կարգի ազգային վիզա) ստանալու համար վճարվող տուրքը կազմում է 60 եվրո (32.700 դրամ):[1] Աշխատանքի թույլտվության դիմումի ներկայացման հետ կապված լրացուցիչ վճար սահմանված չէ: Բացի նշված տուրքից, հավանաբար, պետք է վճարեք առողջության կարճաժամկետ ապահովագրության համար, որը ներառում է Գերմանիա ժամանելու սկզբնական ժամանակահատվածը, մինչ առողջության ապահովագրության պետական ծառայությունը ձևակերպի Ձեր փաստաթղթերը: Լրացուցիչ ծախսեր կարող են առաջանալ, եթե պահանջվի ներկայացվող փաստաթղթերի նոտարական վավերացումը կամ հավատարմագրված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունը (առավել մանրամասն տե՛ս «Որակավորման ճանաչում» հատվածը):

Եթե մտադիր եք օգտվել հայտի փաթեթը պատրաստող կազմակերպությունների ծառայություններից, ապա նախապես խորհրդակցեք այս ուղեցույցում նշված պաշտոնական հաստատությունների հետ և ուսումնասիրեք համապատասխան աղբյուրները, որտեղ հստակ ներկայացված է անհրաժեշտ վճարների չափը:

Աշխատանքի և կացության թույլտվության համար դիմելու կարգը

Մինչև 3 ամիս ժամկետով Գերմանիա մուտք գործելու և աշխատանքի թույլտվություն ստանալու դիմում

Գերմանիայում աշխատանքի թույլտվության և մուտքի վիզայի կամ կացության թույլտվության տրամադրման դիմումները ներ-

1 Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ http://goo.gl/uP6Ps

կայացվում են մեկ հայտով՝ վերածվելով մեկ գործընթացի: Աշխատանքի առաջարկ ստանալուց և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (այդ թվում՝ որակավորման վկայականները) պատրաստելուց հետո հարկավոր է «D» կարգի ազգային վիզա ստանալու համար (որը ենթադրում է նաև աշխատանքի թույլտվություն) դիմում ներկայացնել Երևանում Գերմանիայի դեսպանությանը: Դեսպանությունը Ձեր դիմումը կփոխանցի համապատասխան երկրամասի՝ Օտարերկրացիների հարցերով իրավասու գերատեսչության (գերմ.՝ "Ausländeramt") ստորաբաժանում: Շատ դեպքերում նշված վարչությունն իր հերթին դիմումը փոխանցում է Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայությանը, որի կողմից դիմումի հավանության պարագայում Դուք կստանաք նաև աշխատանքի թույլտվություն:

Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայությունը դիմումը կբավարարի, եթե համոզվի, որ օտարերկրացուն աշխատանքի ընդունելը որևէ բացասական հետևանք չի ունենա աշխատաշուկայի համար (նախապատվությունը, եթե կարելի է այդպես ասել, միշտ տրվում է Գերմանիայի կամ ԵՄ մյուս պետությունների քաղաքացիներին), և որ օտարերկրացին օգտվելու է նույն աշխատանքային պայմաններից, ինչ տեղացի աշխատողները: Դա նշանակում է, որ Ձեր ապագա գործատուն նախ պետք է թափուր աշխատատեղի հայտարարությունը և մանրամասները (աշխատանքային ժամեր, վարձատրություն և այլն) ներկայացնի **Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալությանը** (գերմ.՝ "Agentur für Arbeit"): Եթե Ձեր ապագա գործատուն նշված տվյալները տրամադրի մինչ Ձեր դիմումի ներկայացումը, դիմումը կբավարարվի առավելագույնս կարճ ժամանակահատվածում:

Գերմանիայի կամ ԵՄ մյուս պետությունների քաղաքացիներին նախապատվություն չի տրվում եթե.

- դիմորդն ունի Գերմանիայում ճանաչված բարձր որակավորում, մասնավորապես՝ բժշկության, մաթեմատիկայի և ճարտարագիտության ոլորտներում (ովքեր կարող են ստանալ այսպես կոչված կապույտ քարտ),

- դիմորդը մասնագիտական կամ բարձրագույն կրթություն է ստացել Գերմանիայում կամ արտերկրում գործող գերմանական ուսումնական հաստատությունում,

- դիմորդին աշխատանք է առաջարկել անմիջապես Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայությունը (գերմ.՝ ZAV):

Իսկ Աշխատանքի տեղավորման միջազգային ծառայության հավանությունը անհրաժեշտ չի լինում, երբ խոսքը գնում է հետևյալ մասնագիտությունների մասին.[1]

- ուսուցիչներ, գիտաշխատողներ, ճարտարագետներ և արտերկրից հրավիրված գիտնականի հետազոտական խմբի մեջ մտնող այլ մասնագետներ,
- դերասաններ, արվեստագետներ, դասախոսներ, ում գործունեությունը Գերմանիայում չի գերազանցում 3 ամիսը (12 ամսվա կտրվածքով),
- արհեստավարժ մարզիկներ, մոդելներ, լրագրողներ,
- որակավորված մասնագետներ, ում միջազգային ընկերությունը գործուղում է Գերմանիայում գտնվող իր մասնաճյուղ՝ մինչև 3 ամիս տևողությամբ վերապատրաստվելու նպատակով,
- ընկերությունների առևտրային ներկայացուցիչներ, ովքեր պետք է ժամանակավորապես աշխատեն Գերմանիայում գրանցված գործատուի գրասենյակում,
- արտասահմանյան ընկերությունների աշխատողներ, ովքեր գործուղվում են Գերմանիա մինչև 3 ամիս ժամկետով շինարարական կամ մոնտաժային աշխատանքներ կատարելու նպատակով:

Որոշակի սահմանափակումներ կան սեզոնային և ցածր որակավորում պահանջող աշխատանքների դիմորդների համար: Որպես կանոն, Գերմանիայի աշխատաշուկայի այդ ոլորտներում օտարերկրացիները աշխատանքի են ընդունվում համապատասխան պետության և Գերմանիայի միջև կնքված երկկողմ համաձայնագրերով: Ներկայիս դրությամբ Հայաստանը Գերմանիայի հետ նման համաձայնագիր չունի:

Գերմանիայում անօրինական հիմքերով աշխատելու հետևանքով օտարերկրացին կարող է ոչ միայն զրկվել որոշ իրավունքներից, այլև արտաքսվել երկրից: 3-5 տարի ժամանակահատվածով

1 Ամբողջական ցանկը ներկայացված է «Գերմանիայում օտարերկրյա աշխատողների զբաղվածության մասին. տեղեկատվական գրքույկ»ում, օգոստոս 2012թ., Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալություն՝ http://goo.gl/BhPE5:

նրան կարգելվի մուտք գործել Գերմանիա և/կամ Շենգենյան գոտու տարածք, ինչպես նաև նա կտուգանվի առնվազն 5.000 եվրոյի չափով: Իսկ գործատուն կտուգանվի 500.000 եվրոյի չափով:[1]

3 ամիսը գերազանցող ժամկետով աշխատանքի և կացության թույլտվություն ստանալու դիմում

Եթե մտադիր եք Գերմանիայում աշխատել 3 ամսից ավելի, ապա պետք է ներկայացնեք կացության թույլտվության դիմում: Շատ դեպքերում իրենց ծագման երկրներում Գերմանիայի հյուպատոսությանը դիմում ներկայացրած և Օտարերկրացիների գրանցման վարչությունից հավանություն ստացած օտարերկրացիները ստանում են «D» կարգի ազգային վիզա (որը ենթադրում է նաև աշխատանքի թույլտվություն) և Գերմանիա ժամանելուն պես կացության թույլտվություն ստանալու դիմում են ներկայացնում Օտարերկրացիների գրանցման վարչությանը:[2] Այս կարգի մուտքի վիզան թույլ է տալիս օտարերկրացիներին անմիջապես անցնել աշխատանքի, մինչև որ կձևակերպվի նրանց կացության թույլտվությունը: Կացության թույլտվության ժամկետը կախված է Ձեր աշխատանքային պայմանագրի տևողությունից: Կացության թույլտվությունը տրամադրվում է էլեկտրոնային քարտի տեսքով: Կացության թույլտվության քարտի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Միգրացիայի և փախստականների հարցերով վարչության տեղեկատվական էջը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Միգրացիայի և փախստականների հարցերով վարչության տեղեկատվական էջը՝ goo.gl/kD94I

Հաշվի առեք, որ եթե Գերմանիա ժամանեք «C» կարգի շենգեն վիզայով, ապա, հավանաբար, կացության թույլտվություն ստանալու կարիք չեք ունենա:[3] Առավել մանրամասն տեղեկատվություն

1 «Գերմանիայում օտարերկրյա աշխատողների զբաղվածության մասին. տեղեկատվական գրքույկ», օգոստոս 2012թ., Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալություն՝ http://goo.gl/BhPE5

2 «Հարցեր և պատասխաններ Գերմանիայում օտարերկրացիների աշխատանքի տեղավորման մասին», Գերմանիայի Դաշնային Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ http://goo.gl/RUKG2

3 «Գերմանիայում օտարերկրյա աշխատողների զբաղվածության մասին. տեղեկատվական գրքույկ», օգոստոս 2012թ., Աշխատանքի տեղավորման դաշնային

ստանալու համար կապվեք Երևանում Գերմանիայի դեսպանության աշխատակիցների հետ:

«Կապույտ քարտ» (Blue Card)

«Կապույտ քարտը» (անգլ.՝ Blue Card) կացության թույլտվության տեսակ է, որը վերջերս է գործարկվել և նախատեսված է ԵՄ-ին չանդամակցող պետություններում բնակվող բարձր որակավորում ունեցող մասնագետների համար: «Կապույտ քարտը» տրամադրվում է պարզեցված ընթացակարգով՝ առանց Աշխատանքի տեղավորման դաշնային ծառայության հավանության: «Կապույտ քարտ» ստանալու համար օտարերկրացին պետք է ապացուցի իր բարձր որակավորումը, և ունենա այնպիսի աշխատանք, որի տարեկան աշխատավարձը կկազմի նվազագույնը 44.800 եվրո: Աշխատավարձի չափը կարող է ավելի պակաս լինել մաթեմատիկայի, բնական և կիրառական գիտությունների և բժշկության (բժիշկներ) ոլորտների մասնագիտությունների պարագայում: Այդ դեպքում նվազագույն տարեկան աշխատավարձը պետք է կազմի առնվազն 35.000 եվրո:

«Կապույտ քարտը» տրվում է աշխատանքային պայմանագրի տևողության ժամկետով, սակայն ոչ ավել քան 4 տարի ժամկետով:[1]

Ուր և ինչպես դիմել

Վիզայի և աշխատանքի թույլտվություն ստանալու հետ կապված դիմումները ներկայացվում են Երևանում Գերմանիայի դեսպանությանը:

Հայաստանում Գերմանիայի դեսպանություն

Հասցե՝	0025 Երևան, Չարենցի փող. 29,
Հեռախոս՝	+374 10 52 32 79; +374 10 58 65 91
Աշխատանքային օրերը և ժամերը՝ երկուշաբթիից ուրբաթ՝ 0:30-12:30	
Ֆաքս՝	+374 010 52 47 81
Էլ. փոստ՝	visa@eriw.diplo.de
Ինտերնետային կայք՝	www.eriwan.diplo.de

Հարցազրույցի հերթագրումը կատարվում է դեսպանության էլ. փոստի միջոցով, ինչից հետո հարկավոր է լրացնել դիմումը և մնա-

---

գործակալություն՝ http://goo.gl/BhPE5

1 Գերմանիայի Արտաքին գործերի դաշնային նախարարություն, http://goo.gl/0gzOE

ցած անհրաժեշտ փաստաթղթերով հանդերձ անձամբ ներկայանալ հյուպատոսարան: Հյուպատոսությանը պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- վավեր անձնագիր
- ստորագրված աշխատանքային պայմանագիր
- Ձեր որակավորման մասին վկայող փաստաթուղթ (իսկ եթե կա Գերմանիայում որակավորման ճանաչման անհրաժեշտություն, ապա կցեք նաև իրավասու մարմնի եզրակացությունը):

Անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական ցանկը ներկայացված է հետևյալ հղումի ներքո՝ http://goo.gl/PJB5M:

Աշխատելու նպատակով Գերմանիայի մուտքի վիզա ստանալու դիմումների դիտարկումը տևում է առնվազն վեց ամիս:

Դիմումի հետ կապված բոլոր հարցերի համար պետք է դիմեք հյուպատոսությանը:

Ինչպես պաշտպանել շահերը

Որպես շրջանառու աշխատանքային միգրանտ՝ Ձեր իսկ շահերից է բխում անընդհատ հետևել միգրացիայի ոլորտի նորություններին, կարդալ այս ուղեցույցը, խորհրդակցել Գերմանիայում և դրա սահմաններից դուրս գործող համապատասխան պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ և պաշտպանել Ձեր իրավունքները: Որևէ խնդիր ունենալու դեպքում, նախ կարող եք դիմել Գերմանիայի իշխանություններին: Հետևյալ կայքի միջոցով կարող եք գտնել Ձեր երկրամասի համապատասխան պետական մարմինները (կայքը հասանելի է գերմաներենով)՝ http://goo.gl/RWJS0:

Իսկ արտակարգ իրավիճակներում հայտնվելիս անմիջապես զանգահարեք՝

- **ոստիկանություն,** շուրջօրյա հեռախոսահամարը՝ 110
- **հրշեջ ծառայություն**, շուրջօրյա հեռախոսահամարը՝ 112

- **փրկարարական ծառայության/շտապօգնություն,** շուրջօրյա հեռախոսահամարը՝ 112

Մուտքի վիզայի դիմումի վերաբերյալ որոշման բողոքարկում

Որպես կանոն, վիզայի դիմումի մերժման մասին առաջին ծանուցումներում մերժման հիմքերը չեն ներկայացվում: Թեև իրավասու մարմնի (Գերմանիայի դեսպանության կամ հյուպատոսության) կողմից կայացրած որոշումը ենթակա չէ բողոքարկման, այնուամենայնիվ կարելի է ներկայացնել դիմումի վերանայման հայտ: Եթե դեսպանությունը չփոխի իր որոշումը, ապա նա պետք է ներկայացնի դրա պատճառները: Վիզայի դիմումը մերժելու մասին դեսպանության երկրորդ որոշումը կարելի է բողոքարկել Բեռլինի վարչական դատարանում:[1] Մերժման ծանուցման մեջ, որպես կանոն, նշվում է բողոքարկման ժամկետը:

Աշխատանքային և կոլեկտիվ պայմանագիր

Գերմանիայում օրինական է համարվում միայն գրավոր աշխատանքային պայմանագրի վրա հիմնված աշխատանքը: Աշխատանքային պայմանագրում նշվում են.

- պայմանավորվող կողմերի անունները (և համապատասխանաբար հասցեները),
- պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը,
- վարձատրության պայմանները,
- աշխատավայրը,
- աշխատանքը սկսելու ամսաթիվը,
- պայմանագրի տևողությունը,
- փորձաշրջանը,
- պաշտոնի նկարագիրը,

1 Գերմանիայի արտաքին գործերի դաշնային նախարարություն՝ http://goo.gl/NWqJV

- աշխատանքի վարձատրությունը և հավելավճարները,
- աշխատաժամանակը,
- արձակուրդը:[1]

Հիշեք, որ Ձեր աշխատանքի թույլտվության դիմումի վերաբերյալ որոշումը մեծապես կախված է Ձեր աշխատանքային պայմանագրի դրույթներից, քանի որ օտարերկրացի աշխատողները պետք է օգտվեն նույն իրավունքներից, ինչ Գերմանիայի քաղաքացիները:

Ձեր պայմանագիրը կարող է նաև կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի մաս կազմել, որը կնքվում է համապատասխան գործատու միավորումների և արհմիությունների միջև: Կոլեկտիվ պայմանագրերը կարող են ներառել լրացուցիչ դրույթներ և իրավունքներ: Ուշադիր կարդացեք Ձեր աշխատանքային պայմանագիրը և գործատուի հետ ճշտեք բոլոր անհասկանալի հարցերը (հատկապես եթե ունեք լեզվի հետ կապված խնդիրներ):

Ելնելով Ձեր՝ շրջանառու աշխատանքային միգրանտի կարգավիճակից՝ Ձեզ հետ, հավանաբար, կկնքեն ֆիքսված ժամկետով աշխատանքային պայմանագիր, որով էլ երաշխավորվում են աշխատողի հիմնական իրավունքները: Նշված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ հղումի ներքո՝ **http://goo.gl/TYOMo**:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում գործում է թեժ գիծ, որի միջոցով բոլորը կարող են ստանալ խորհրդատվություն աշխատանքի հետ կապված հարցերի շուրջ:

Թեժ գծի հեռախոսահամարները կարող եք գտնել նախարարության ինտերնետային կայքում՝
http://goo.gl/KzvYY

Թրաֆիքինգ

Կարդացեք և պատասխանեք ստորև ներկայացվող հարցերին, որոնք վերցված են ԵՄ ներգաղթի ինտերնետային կայքի «Թրաֆիքինգի զոհերի պաշտպանություն» բաժնից (**http://goo.gl/yUqtl**):

1 **http://goo.gl/V9h88**

Դրանցից որևէ մեկին տրված դրական պատասխանը նշանակում է, որ Դուք թրաֆիքինգի զոհ եք.

- Արդյո՞ք Ձեզանից վերցրել և չեն վերադարձրել Ձեր անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:
- Արդյո՞ք Ձեզ ստիպում են աշխատել առանց վարձատրության՝ պարտքի դիմաց:
- Արդյո՞ք Ձեզ խաբել են՝ կեղծ տեղեկություններ տրամադրելով աշխատանքի բնույթի, գտնվելու վայրի կամ գործատուի մասին:
- Արդյո՞ք Դուք աշխատում եք սահմանված աշխատաժամանակը գերազանցող ժամեր, օրեր կամ առողջության համար վտանգավոր պայմաններում:
- Արդյո՞ք Դուք մեկուսացված եք, բանտարկված կամ հարկադրական հսկողության տակ եք աշխատում:
- Արդյո՞ք Ձեզ ստիպում են աշխատել կամ զբաղվել հանցավոր գործունեությամբ կամ սեռական ոտնձգությունների են ենթարկում:
- Արդյո՞ք որևէ մեկը սպառնում է վնաս հասցնել Ձեզ կամ Ձեր ազգականներին:

Նվազագույն աշխատավարձ

Գերմանիայում աշխատավարձի չափերը տարբերվում են ըստ երկրամասերի (հատկապես՝ արևմտյան և արևելյան հատվածներում) և ըստ աշխատանքի ոլորտների: Թեև նվազագույն աշխատավարձի չափն օրենքով չի սահմանվում (բացառությամբ որոշ ոլորտների, օրինակ՝ շինարարություն և մաքրման ծառայություններ[1]), տարբեր հիմնարկների արհմիությունները կոլեկտիվ պայմանագրերում սահմանում են իրենց ոլորտներում նվազագույն աշխատավարձի չափը: Համապատասխան կանոնակարգը մանրամասն

1 Աշխատանքի և սոցիալական հարցերի դաշնային նախարարություն «Ժամանակավոր գործուղված աշխատողների նվազագույն աշխատավարձ»՝ http://goo.gl/W3VKo

ներկայացված է Աշխատանքի և սոցիալական հարցերի դաշնային նախարարության կայքում՝ http://goo.gl/p20Lw:

Աշխատանքի և սոցիալական հարցերի դաշնային նախարարության կայքը՝ http://goo.gl/p20Lw

Նախքան աշխատանքի պայմաններին համաձայնելը շատ կարևոր է պարզել տվյալ ոլորտում ընդունված նվազագույն աշխատավարձի չափը: Հետևելով այս հղումին՝ http://goo.gl/7NSYp՝ կարող եք բեռնել բազմալեզու (նաև ռուսերեն) գրքույկ տարբեր ոլորտներում սահմանված նվազագույն աշխատավարձի չափերի մասին: Այստեղ Դուք կգտնեք նաև Բեռլինում և Բրանդենբուրգում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վարվող սակագների գրանցամատյանը, որում ներկայացված են տվյալ երկրամասերում գործող բոլոր սակագները՝ ըստ ոլորտների:

Աշխատանքային պայմաններ

Գործատուն պարտավոր է ապահովել Ձեր առողջության համար բարենպաստ և անվտանգ աշխատանքային պայմաններ: Եթե մտահոգություն ունեք, որ Ձեր աշխատանքի պայմանները անվտանգ չեն, կամ էլ պարզել եք, որ առողջության համար վտանգավոր աշխատանք եք կատարում՝ առանց պատշաճ պաշտպանական միջոցների ու միջոցառումների, ապա կարող եք չկատարել այդ աշխատանքը և դիմել Ձեր գործատուին, արհմիության ներկայացուցիչներին կամ էլ, ի վերջո, աշխատանքային պայմանների համար պատասխանատու տեղի իրավասու տեսչությանը:[1] Տարածքային պետական տեսչությունների ցանկը ներկայացված է հետևյալ հղումի ներքո՝ http://goo.gl/UXhGg:

Լիազորված ներկայացուցիչ

Գործնական նկատառումներով կարող եք որևէ մեկին լիազորել (լիազորագրով)՝ հանդես գալու Ձեր անունից և/կամ պաշտպանելու Ձեր շահերը:Դա կարող է հատկապես օգտակար լինել, եթե արդեն հեռացել եք Գերմանիայից, սակայն դեռևս անավարտ գործեր ունեք այդ երկրում: Այսպես, կարող եք Ձեր օրինական ներկայացուցչի միջոցով մասնակցել որևէ հարցի դատական կարգավորմանը:

1 Աշխատանքային միջավայրի ոլորտը կարգավորվում է երկրամասերի մակարդակով:

Ռոտենբուրգ Տաուբերի վրա. տեսարան քաղաքից

Առողջություն. ՄԻԱՎ

Արտասահմանում գտնվելու ժամանակ շատ կարևոր է առողջ լինել: Եթե կասկածներ ունեք Ձեր առողջական վիճակի վերաբերյալ, ապա դիմեք բժշկի:

Առողջության վերաբերյալ այս հատվածը նվիրված է ՄԻԱՎ-ի մասին իրազեկմանը: Մարդու իմունային անբավարարության վիրուսը, կրճատ՝ ՄԻԱՎ, մահացու վիրուս է, որը փոխանցվում է սեռական ճանապարհով, ինչպես նաև արյան միջոցով: Վերջին ճանապարհով մարդը կարող է վարակվել, եթե նրան ներարկել են ՄԻԱՎ-ով վարակված դոնորի արյուն կամ որևէ դեղամիջոց ներարկելու համար օգտվել են արդեն օգտագործված ներարկիչից: ՄԻԱՎ-ով չվարակվելու համար խորհուրդ է տրվում ձեռնարկել նախազգուշական միջոցներ, այդ թվում.

- խուսափել պատահական սեռական հարաբերություններից,
- հավատարիմ մնալ չվարակված և հավատարիմ զուգընկերոջը, ով չի դրսևորում ռիսկային վարքագիծ (չի օգտագործում թմրամիջոցներ, չի օգտվում օգտագործված ներարկիչներից),
- սեռական հարաբերությունների ընթացքում ճիշտ օգտագործել տղամարդկանց կամ կանանց համար նախատեսված պահպանակները:

ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարդացեք ՄԻԱՎ/ՁԻԱՀ գծով ՄԱԿ-ի միասնական ծրագրի (UNAIDS) շրջանակներում հրատարակված նյութերը՝ http://goo.gl/TXRbH:

Գերմանիայում ՄԻԱՎ-ի ստուգումը և խորհրդատվությունն անվճար է: Անհրաժեշտության դեպքում կարող եք դիմել տեղական բուժհաստատությանը:[1] ՄԻԱՎ-ի հետ կապված հարցերով լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ Գերմանիայի առողջապահական կրթության դաշնային կենտրոնի “Don’t Give Aids a Chance” ՁԻԱՀ-ի դեմ պայքարի կայքից՝ http://www.gib-aids-keine-chance.de/:

1 Միգրացիայի և փախստականների հարցերով վարչություն՝ http://goo.gl/xyPYk

Եթե ունեք հարցեր կամ հայտնվել եք դժվար կացության մեջ

Միգրացիայի և մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերի դեպքում կարող եք դիմել հետևյալ հաստատություններին՝

- Խտրականության հաղթահարման դաշնային գերատեսչություն (Federal Anti-discrimination Agency)՝ **http://www.antidiskriminierungsstelle.de/EN**

- Մարդու իրավունքների ուսումնասիրության գերմանական ինստիտուտ (German Institute for Human Rights)՝ **http://www.institut-fuer-menschenrechte.de/en/home.html**

- "Migration online" **http://www.migration-online.de/cms/index.html**

- Միգրացիայի միջազգային կազմակերպություն՝ **http://www.iom.int**

- Եվրոպայում աշխատող միգրանտների միություն՝ **http://www.emwu.org**

- Միգրանտ աշխատողներին աջակցող կազմակերպությունների հղումներ՝ http://goo.gl/X4f1S

- Փախստականներին աջակցող կազմակերպությունների հղումներ՝ **http://goo.gl/yHZd8**

Թրաֆիքինգ

- "KOK"՝ **http://www.kok-buero.de**

Գերմանիայի ամբողջ տարածքում գործող կազմակերպությունների ցանց է, որը պայքարում է միգրանտ կանանց շահագործման (թրաֆիքինգի) և նրանց նկատմամբ բռնության գործադրման դեմ: Կազմակերպության կայքում ներկայացված են Գերմանիայի ողջ տարածքում տեղակայված խորհրդատվական կենտրոնների հասցեները և դրանց կայքերի հղումները:

- Մարդկանց աշխատանքային շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի Բեռլինի դաշինք (BBGM)՝ www.gegen-menschen-handel.de:

Հայաստանի Հանրապետության դեսպանությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը հանդես է գալիս որպես Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչ, և նրա գործառույթներից է բխում Գերմանիայում Հայաստանի քաղաքացիների շահերի պաշտպանությունը: Դեսպանության աշխատակիցները կարող են նաև օգտակար խորհուրդներ տալ կացության և աշխատանքի թույլտվության հետ կապված տարբեր հարցերի շուրջ:

Հայաստանի Հանրապետության դեսպանությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում

Դեսպանությունը աշխատում է՝	երկուշաբթի-ուրբաթ՝ ժամը 09:00 - 18:00
Հասցե՝	Գերմանիա, 14050, Բեռլին, Նուսսբաումալլեե 4
Հեռ.՝	+49 30 40509110, +49 30 40509116
Ֆաքս՝	+49 30 40509125
Էլ. փոստ՝	armgermanyembassy@mfa.am
Կայք՝	http://germany.mfa.am

Հայ համայնքի կազմակերպությունները և միությունները

Ըստ Գերմանիայում Հայաստանի դեսպանության ինտերնետային կայքի տվյալների՝ Գերմանիայում բնակվում է 50.000 – 60.000 հայ: Թեև հայերը սփռված են Գերմանիայի գրեթե բոլոր երկրամասերում, այնուամենայնիվ մեծ մասը կենտրոնացած է մեծ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Քյոլնում, Մյունխենում, Շտուտգարտում, Համբուրգում և Բեռլինում:

Գերմանիայում գործում են հետևյալ հայկական կազմակերպությունները՝

- «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդ» (“Zentralrat der Armenier in Deutschland”)՝
  http://www.zentralrat.org

- Գերմանահայոց ընկերություն (“Armenisch-Deutsche Korrespondenz”), (ունի եռամսյակային թերթ)՝
  http://www.deutscharmenischegesellschaft.de

- «Հռենոս/Մայն երկրամասի հայեր» (“Armenier Rhein-Main”)՝
  http://www.armenier-rheinmain.de

- Քյոլնի հայ համայնք՝
  http://www.armenischegemeindekoeln.de

- «Գերմանիայում բնակվող երիտասարդ հայեր»՝
  http://www.junge-armenier.de

- Բադեն-Վյուրթեմբերգի հայ համայնք՝
  http://www.agbw.org

- Բիլեֆելդի հայ համայնք՝
  http://goo.gl/9QpcB:

Հայրենակիցներին գտնելու լավագույն միջոց են համարվում սոցիալական ցանցերը: Օրինակ, «Ֆեյսբուք» (“Facebook”) սոցիալական ցանցում գրանցված են Հեսսենի, Բեռլինի և նույնիսկ ամբողջ Գերմանիայի հայ համայնքների էջերը՝

- «Գերմանիայում բնակվող հայեր»՝
  http://goo.gl/UL3H5

- «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդ»՝
  http://www.facebook.com/groups/zentralrat/

- Հեսսենի հայ համայնք՝
  http://www.facebook.com/groups/268467549875101/

- Բեռլինի հայերի համայնք՝
  http://www.facebook.com/armenische.gemeinde.berlin

Իր հերթին Բիլեֆելդի հայ համայնքի ինտերնետային կայքը պարունակում է Գերմանիայում տեղակայված հայկական խմբերի և կազմակերպությունների համապարփակ մի հղում՝ http://goo.gl/eMxgi:

Գերմանիայի շատ քաղաքներում, օրինակ՝ Բեռլինում և Քյոլնում, կան հայկական եկեղեցիներ: Հայկական եկեղեցիների և դրանց կոնտակտային տվյալների ամբողջ ցանկը ներկայացված է հետևյալ հղումի ներքո՝ http://goo.gl/ESQON:

Կյանքը Գերմանիայում

Նվազագույն կենսապահովում

Գերմանիայի տարբեր բնակավայրերում նվազագույն կենսապահովման զամբյուղի արժեքը տարբեր է: Այն առավել բարձր է մեծ քաղաքներում (Բեռլինը դեռևս բացառություն է կազմում) և Գերմանիայի արևմտյան մասում: Ծախսերի մեծ մասը կազմում է բնակարանի վարձավճարը: Մյունխենում, Ֆրանկֆուրտում, Համբուրգում և այլ մեծ քաղաքներում վարձավճարը սկսվում է առնվազն 10 եվրոից՝ մեկ քառակուսի մետրի համար: Հաշվի առեք, որ կոմունալ ծախսերը կարող են կազմել վարձավճարի 25 տոկոսը:[1] Տրանսպորտային ծախսերը նույնպես կազմում են եկամուտի զգալի մասը: Հիմնական ծախսերի մանրամասն դասակարգումը ներկայացված է հետևյալ հղումի ներքո՝ http://goo.gl/ghG2F:

Լեզու

Աշխատելու նպատակով Գերմանիա մեկնող բոլոր միգրանտներին խորհուրդ է տրվում առնվազն տարրական գիտելիքներ ստանալ գերմաներենից: Գերմաներենի իմացությունն անհրաժեշտ է

1 "Living and working in Germany: A guide for international scientists at Max Planck Institutes" («Կյանքը և աշխատանքը Գերմանիայում. ուղեցույց Մաքս Փլանք գիտահետազոտական հաստատություններ գործուղվող օտարերկրյա գիտնականների համար»), 2010թ., հղումը՝ http://goo.gl/mqK3G

մի շարք աշխատանքների դիմելու, ինչպես նաև պաշտոնական կայքերում զետեղված տեղեկատվությունը հասկանալու համար: Հայաստանում գերմաներեն սովորելու հնարավորությունները բավականին մեծ են. կարելի է հաճախել դասընթացների կամ պարապել մասնավոր դասուսույցների մոտ: Կարելի է գերմաներեն սովորել նաև Գյոթեի անվան ինստիտուտում, որը դասընթացներ է առաջարկում ինչպես հենց Գերմանիայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս՝ հեռակա ուսուցմամբ: 1997 թվականից սկսած Երևանի Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում գործում է Գյոթեի ինստիտուտի գերմաներեն գրականության ընթերցասրահ (Հայաստան, 0001, Երևան Տերյան փող. 42/1, հեռ՝ +374 10 56 43 29, էլ. փոստ՝ germany@childlib.am; կայք՝ www.natchildlib.org:

Գյոթեի անվան ինստիտուտի կայքը՝
http://www.goethe.de/enindex.htm
Գյոթեի ինստիտուտի գերմաներեն գրականության ընթերցասրահի (Հայաստան, 0001, Երևան Տերյան փող. 42/1, հեռ՝ +374 10 56 43 29)
էլ. փոստը՝ germany@childlib.am;
կայք՝ www.natchildlib.org

Առցանց (ինտերնետով) գերմաներեն սովորելու դասընթացների օգտակար հղումներ է պարունակում Գերմաներենի ինստիտուտի (IDS) ինտերնետային կայքը՝ http://www.ids-mannheim.de:

2013 թվականին պետք է մեկնարկի գերմաներենի դասընթացների հատուկ բազմալեզու պորտալը (ուսուցման լեզուներ են լինելու նաև անգլերենը և ռուսերենը), որը նախատեսված է մասնավորապես Գերմանիայի միգրանտ աշխատողների համար: Անվճար դասընթացների մասին տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ կայքից՝ www.deutsch.info:

Տարրական գիտելիքներ կարելի է ձեռք բերել նաև ստորև նշված կայքի միջոցով՝ http://www.byki.com: Սակայն, այս կայքով գերմաներեն սովորելու համար պետք է ունենաք տարրական գիտելիքներ անգլերենից:

Ազգային սովորույթներ

Թեև մի ամբողջ ազգի բարքերը շատ դժվար է ընդհանրացնել, այնուամենայնիվ կփորձենք ստորև ներկայացնել Գերմանիայում առավել տարածված վարքագծի կանոնները:[1]

Ընտանիք և ընկերներ

Թեև տարածված է այն կարծրատիպային տեսակետը, որ գերմանացիները շատ զուսպ են և չունեն հումորի զգացում, սակայն իրականում նրանք համարվում են շատ ընկերասեր և իրենց ազատ ժամանակը սիրով անցկացնում են ընտանիքի և ընկերների հետ, հատկապես, գարեջրի գավաթի շուրջ:

Ճշտապահություն

Աշխատանքում գերմանացիները շատ են կարևորում ստույգությունը և ճշտապահությունը: Խիստ անքաղաքավարի է չներկայանալ հանդիպմանը կամ հետաձգել այն վերջին պահին: Դա վերաբերում է ոչ միայն պաշտոնական, այլև մասնավոր հանդիպումներին: Եթե չեք կարող պայմանավորված ժամին գալ հանդիպմանը կամ զգում եք, որ ուշանալու եք, ապա այդ մասին տեղյակ պահեք Ձեզ սպասողներին:

Վարքագծի պաշտոնական կանոններ

- Տարիքով մեծ մարդկանց դիմելիս սովորաբար գործածվում է “Sie” (Դուք) դերանունը, իսկ ավելի անմիջական իրավիճակներում գործածվում է “Du” (դու) դերանունը:

- Գործարար ոճի հագուստը բավականին զուսպ է և ավանդական. պաշտոնական հանդիպումների ժամանակ պետք չէ կրել շքեղ ոսկյա զարդեր կամ այլ նմանատիպ պարագաներ:

1 Այս բաժինը կազմելիս օգտագործվել են հետևյալ նյութերը՝ ”Living and working in Germany: A guide for international scientists at Max Planck Institutes” («Կյանքը և աշխատանքը Գերմանիայում. ուղեցույց Մաքս Փլանք գիտահետազոտական հաստատություններ գործուղվող օտարերկրյա գիտնականների համար»), 2010թ.՝ http://goo.gl/mqK3G, ինչպես նաև՝ Kwintessential LTD՝ http://goo.gl/zy0BG

Անմիջական հաղորդակցություն

Գերմանացիներն աշխատանքի ոլորտում շատ նպատակաուղղված են: Այս բնագավառում հաջողության հասնելու համար նրանք մասնավոր հարաբերություններ հաստատելու անհրաժեշտություն չեն զգում: Թեև գործընկերները երբեմն մասնավոր զրույցներ են վարում, սակայն անձնական հարաբերությունները միշտ սահմանազատում են աշխատանքից:

Պլանավորում

Գերմանացիները համարվում են «պլանավորման վարպետներ»: Նրանք անընդհատ ծրագրում և հստակ պատկերացնում են, թե ինչ են անելու որոշակի օրվա որոշակի պահին, ընդ որում՝ ինչպես աշխատանքում, այդպես էլ անձնական կյանքում: Աշխատանքը և անձնական կյանքը խիստ սահմանազատված են:

Ողջույնի ձևեր

Ողջունելիս և հրաժեշտ տալիս ընդունված է ձեռքսեղմումը, որի ընթացքում զրուցակիցները նայում են միմյանց: Եթե մարդիկ կոնտակտ չեն հաստատում աչքերով (ոչ միայն բարևելիս, այլև անմիջական զրույցի ժամանակ), ապա այն դիտվում է որպես **անքաղաքավարության** դրսևորում: Մտերիմ ընկերները ողջունելիս կամ հրաժեշտ տալիս սովորաբար գրկախառնվում են:

Տունը գերմանացիների համար

- Տունը գերմանացիների հպարտության առարկան է:
- Գերմանացիները միշտ մաքուր են պահում ոչ միայն իրենց տները, այլև ընդհանուր տարածքները, ինչպես օրինակ՝ միջանցքները, աստիճանները և մայթերը:
- Տունը համարվում է սրբություն, որի դռները բաց են միայն մտերիմ ընկերների և բարեկամների համար:
- Ճաշկերույթին առաջին կենացն ասում է տանտերը:
- Որոշ ժամանակ անց պատվավոր հյուրը պետք է պատասխան կենաց խմի:

- Գինի խմելիս առավել տարածված կենաց է համարվում՝ “Zum Wohl!” («Ձեր կենացը»):

- Իսկ գարեջրի դեպքում՝ “Prost!” («Ձեր կենացը»):

Կենցաղային աղբի տեսակավորում և/կամ վերամշակում

Կենցաղային աղբը պետք է լցնել տարբեր տոպրակների մեջ, որոնք այնուհետև նետվում են համապատասխան աղբարկղի մեջ (կապույտ աղբարկղը նախատեսված է թղթային թափոնների համար, շագանակագույնը՝ օրգանական թափոնների, դեղինը՝ փաթեթավորման թափոնների, իսկ սևը՝ այլ մնացած թափոնների համար): Ապակե շշերը և պահածոյի թիթեղյա տուփերը կարելի է հանձնել խանութներում տեղակայված հատուկ ընդունման կետեր: Գոյություն ունեն նաև առանձին աղբարկղեր էլեկտրական մարտկոցների և էլեկտրական սարքերի համար:

Ճիշտ նվերի ընտրություն

- Գերմանացիների տուն հյուր գնալիս խորհուրդ ենք տալիս տանել շոկոլադ կամ ծաղկեփունջ:

- Խուսափե՛ք կարմիր վարդերից, քանի որ դրանք ռոմանտիզմի խորհրդանիշ են: Առավել նպատակահարմար է ընտրել դեղին գույնի վարդեր:

- Մեխակներն, իրենց հերթին, սգո խորհրդանիշ են:

- Իսկ շուշան կամ քրիզանթեմ սովորաբար տանում են հուղարկավորությունների դեպքում:

Տեղեկատու կայքեր

- Գերմանիայի առաջխաղացման պաշտոնական (պրոմո) կայք **http://www.tatsachen-ueber-deutschland.de**

- Գերմանիայի հանրային ծառայությունների տեղեկատու կայք
  http://www.bund.de/EN

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության Միգրացիայի և փախստականների հարցերով վարչություն
  http://www.bamf.de/EN

- Գերմանիայի Աշխատանքի և սոցիալական հարցերի դաշնային նախարարություն
  http://www.bmas.de/EN/Home/home.html

- Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալություն
  http://goo.gl/B6FYK

- Աշխատանքի տեղավորման դաշնային գործակալության միջազգային աշխատանքի տեղավորման ծառայություն
  http://goo.gl/KxmSh

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարություն
  http://www.auswaertiges-amt.de/EN

- Երևանում Գերմանիայի դեսպանություն
  http://www.eriwan.diplo.de

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներքին գործերի նախարարություն
  http://www.bmi.bund.de/EN

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության արդարադատության նախարարություն
  http://goo.gl/YoXiN

- Գերմանական արհմիությունների կոնֆեդերացիա
  http://en.dgb.de

- Աշխատանքի տեղավորման գործակալությունների Գերմանիայի դաշնային միավորում
  www.bpv-info.de

- Գերմանիայի բիզնես տեղեկատու պորտալ (Գերմանիայի Էկոնոմիկայի և տեխնոլոգիայի դաշնային նախարարություն)
  http://www.german-business-portal.info

- Ձեռնարկությունների դաշնային ռեգիստր
  https://www.unternehmensregister.de

- Բեռլինի և Բրանդենբուրգի սակագների գրանցամատյան
  http://goo.gl/kz2jZ

- Գերմանիայի անշարժ գույքի միավորում (IVD)
  www.ivd.net

- Գերմանիայի դաշնային վիճակագրական ծառայություն
  http://www.destatis.de

- Մասնագիտական անվտանգության և առողջության դաշնային ինստիտուտ
  http://www.baua.de/de/Startseite.html

- Կրթության և գիտական հետազոտությունների դաշնային նախարարություն
  http://www.bmbf.de/en/index.php

- Գերմանիայում սոցիալական ապահովագրություն
  www.deutsche-sozialversicherung.de

- Պորտալ որակավորված մասնագետների համար
  http://www.make-it-in-germany.com

- “Young Germany” («Երիտասարդ Գերմանիա»)
  http://www.young-germany.de

- Գերմաներենի առցանց (ինտերնետով) դասընթացների պորտալ
  http://deutsch.info/en

- “Recognition in Germany” («Որակավորման ճանաչման ընթացակարգը Գերմանիայում») Կրթության և գիտական հետազոտությունների դաշնային նախարարության պորտալ
  http://goo.gl/xdQQc

- Օտարերկրացիների կրթության կենտրոնական վարչություն (ZAB)
  http://www.kmk.org/zab

- ԵՄ աշխատանքի տեղավորման ծառայությունների պորտալ
  http://goo.gl/OtViS

- Գերմանիայում Հայաստանի դեսպանություն
  http://germany.mfa.am

- Երևանի Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի գերմաներեն գրականության ընթերցասրահ
  http://www.natchildlib.org

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն
  http://www.taxservice.am

- «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն
  www.employment.am

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ գծով ՄԱԿ-ի միասնական ծրագիր (UNAIDS)
  http://www.unaids.org/en

- “Just landed” ոչ պաշտոնական ինտերնետային կայք
  http://goo.gl/AsnXh

Սույն ուղեցույցը նախատեսված է Հայաստանի այն քաղաքացիների համար, ովքեր մտադիր են պլանավորված կամ կիսապլանավորված շրջանառու (ցիրկուլյար) աշխատանքային միգրացիայի շրջանակներում մեկնել Գերմանիա՝ աշխատելու նպատակով: Ուղեցույցը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից համատեղ իրագործվող «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում:

www.ulisses.am

Երևան - 2013